

Լուիզա ԳԱՍՊԱՐՅԱՆ
«ԳԱԱ Գրականության ինստիտուտ»

**ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԺԵՔ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ Վ ԴԱՐԻ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Սույն հոդվածում քննության են առնվում իրակությունների թարգմանության խնդիրները հինգերորդ դարի պատմագրական տեքստերում, մասնավորապես Ագաթանգեղոսի և Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկերում: Հարկ է նշել, որ իրակությունները առանձնակի դժվարություն են ստեղծում թարգմանության ընթացքում և պահանջում են տեսական և գործնական խորքային քննություն թարգմանչի կողմից: Հետազոտության համար հիմք են ծառայել արևմտյան և արևելյան տեսաբանների դրույթներն ու պատմագրական տեքստերի բնագրերը և դրանց անգլերեն և ռուսերեն թարգմանությունները:

Բանալի բառեր: պատմագրություն, թարգմանություն, պատմական իրակություն, Մովսես Խորենացի, Ագաթանգեղոս

Դեռևս անտիկ ժամանակներից թարգմանական գործունեությունը հուզել է տեսաբաններին և փիլիսոփաներին, որոնք փորձել են ձևավորել թարգմանական արվեստը մեկնաբանող օրինաչափություններ, որոնցից էին Հերոդոտոսի “Histories, mid-5th B.C.”, Քվինթիլիանի “Institutio oratoria, 96 C.E.”, Կիկերոնի “De Oratore, 55 B.C.”, Հորացիոսի “Ars Poetica, 20 B.C.”, Ավգուստինի “De doctrina Christiana, 428” աշխատությունները: Այսօր էլ, որպես ազգային մշակույթի կարևոր բնագավառ՝ թարգմանության գործունեության խորքային ուսումնասիրությունը լեզվաբանության և գրականագիտության առանցքում է, որի կարևոր խնդիրներից մեկն է համարժեքության սկզբունքների ձևավորումը և գիտականորեն փորձարկված մեթոդների մշակումը:

Մեր հետազոտական ուսումնասիրության մեջ համարժեքության խնդիրը համակողմանիորեն քննության է առնվում ու պարզաբանվում հինգերորդ դարի պատմագրության բնագավառում, մասնավորապես՝ Ագաթանգեղոսի և Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկերում և դրանց անգլերեն և ռուսերեն թարգմանությունների համեմատությամբ (անգլերեն թարգմանություն Ռ. Թոմսոնի – M. Khorenatsi, 1978/2006, Agatangelos, 1976, ռուսերեն թարգմանություն Գ. Սարգսյանի – М. Хоренаци, 1990, Բ. Տեր-Դավթյանի և Ս. Արևշատյանի – Агахангелос, 2004):

Այս թարգմանությունների լույսի ներքո փորձ է արվելու ուսումնասիրելու պատմական իրակությունների փոխակերպությունը:

Պատմական իրակությունները՝ որպես ժողովրդի մտածողության ինքնատիպ դրսևորում, կարող են խոչընդոտ ստեղծել թարգմանության համարժեք փոխակերպության համար, քանի որ իրակությունները կամ իրոյթները պատմագրության մեջ ունեն տվյալ դարաշրջանով պայմանավորված մշակութային լիցք, որոնք արտացոլում են ազգի պատմական արժեքային համակարգը և ճանաչողության գործընթացը /Cronin, 2006/:

Պատմական իրակությունների համարժեքության խնդիրը դեռևս համապարփակ լուծում չի ստացել, քանի որ այս միավորները որոշակի սոցիալ-պատմական դարաշրջանի արդյունք են և իրենց խորքում խտացնում են տվյալ դարաշրջանի պատմական կոլորիտը: Այստեղ կարևորվում է տարածաժամանակային գործոնը և դրանով պայմանավորված թարգմանական սկզբունքների մշակումը /Латышев, Семенов, 2005/: Բանն այն է, որ թարգմանիչը գտնվում է ժամանակային և սոցիալ-պատմական մեկ այլ միջավայրում և նրա առանցքային խնդիրներից է կատարել համարժեք թարգմանություն՝ տվյալ դեպքում ելնելով հինգերորդ դարի պատմական իրակությունների իմաստաբովանդակային առանձնահատկություններից, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ տալով մանրագնին ծագումնաբանական մեկնաբանություն ծանոթագրությունների մեջ:

Հարկ է նշել, որ Խորենացու և Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» երկերի հիմքում պատմականության սկզբունքն է, որտեղ պատմական դեպքերը քննվում են տեղի ու ժամանակի կոնկրետ պայմաններում /Զրբաշյան, Մախչանյան, 1980, Սարգսյան, 1991, և այլն/:

Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, և դրանց ռուսերեն, անգլերեն թարգմանական տեքստերի համեմատությամբ բացահայտվում են մի շարք պատմական իրակություններ, որոնք թարգմանվում են իմաստաբովանդակային սկզբունքի համաձայն կամ հաճախ նաև գրադարձությամբ:

Բերենք Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» երկի պատմական իրակությունների անգլերեն և ռուսերեն թարգմանությունների համեմատությունը:

...Զի թէպէտ և էր Խոսրովու և դեպան արարեալ, զի իւրեանց տոհմայինքն ի թիկունս եկեացեն և նոցա ընդդէմ կայցեն ընդ նորա թագաւորութեանն, անտի սմա ձեռն տուեալ ի կողմանց Քուշանաց, յայնմ մարզէ և յիւրեանց ի բուն աշխարհէն և ի քաջ ազգաց և ի մարտիկ զօրացն զի ի թիկունս հասցեն. սակայն տոհմք և ազգապետքն և նախարարքն և նահապետքն Պարթևաց ոչ լինէին ունկնդիր (էջ 38):

...And although Khosrov sent an embassy so that his relatives would support him with his own kingdom oppose (the Persian), and that there would also come to his aid (contingents) from the regions of the Kushans, brave and valiant armies both from that area and thier own land, yet his relatives, the cheifs and princes and leaders of the Perthians paid no heed (p. 39)

...несмотря на это, Хосров отправил к ним посланника, дабы (убедить) соплеменников выступить с тыла и подняться против царства Арташира и оттуда со стороны кушанов протянуть ему руку (помощи), храбрыми племенами и боевыми дружинами прикрыть его тыл с той стороны, с их исконной страны. Однако парфянские роды и вожди племен, нахарары и родоначальники власти Арташира, вместо того, чтобы (предпочесть) власть своего рода и братство (ст. 30).

Համատեքստում ներկայացված է, որ Խոսրովը ակնկալում էր իր ազգակիցների աջակցությունը, այդուհանդերձ նրա ջանքերը զուր էին: Անգլերեն թարգմանության մեջ *տոհմք, ազգապետք, նախարարքն, նահապետքն* – *relatives, the chiefs and princes and leaders* պաշտոնական աստիճան պարունակող պատմական իրակությունները թարգմանվել են ըստ իմաստաբովանդակային սկզբունքի, որոնք, թեև չեն արտացոլում բնագրային իրակությունների ազգամշակութային լիցքը, այդուհանդերձ փոխանցում են բնագրային տարրերի իմաստային դաշտը: Ռուսերենում էլ վերոհիշյալ իրակությունները կարծես թե լիարժեք են փոխանցում միավորների իմաստը, ընդ որում նկատելի է նախարար (*нахарар*) միավորի գրադարձությունը (*роды и вожди племен, нахарары и родоначальники*), որի մեկնաբանությունը տրվում է ծանոթագրությունում և ունի հետևյալ բացատրությունը՝ *крупный землевладелец, князь*: Հարկ է նշել, որ Ագաթանգեղոսի անգլերեն թարգմանության մեջ պատմական իրակությունները չեն գրադարձվել, մինչդեռ ռուսերենում հանդիպում ենք գրադարձված միավորներ, այսպես օրինակ հետևյալ համատեքստում.

Առ ինքն կոչէր զամենայն թագաւորս և զկուսակալս և զնախարարս և զգորաւարս և զպետս և զիշխանս իւրոյ տէրութեանն (էջ 42):

He summoned all the kings and governors and princes and generals, and leaders and nobles of his kingdom and they held council (p. 43).

Он призвал к себе на совет всех царей, заместников, нахараров, полководцов, начальников и ишханов своей державы (ст.31).

Ընդհանուր առմամբ ճշմարիտ է Ն. Ադոնցի այն պնդումը, որ նախարարական վարչակարգի էությունը թեև արտացոլվում է պատմագրության մեջ և տալիս արժեքավոր տեղեկություն, այդուհանդերձ այն բավարար չէ վարչակարգի ամբողջական բնութագիրը տալու համար, մանավանդ որ հաճախ նախարարական վարչակարգին պատկանող եզրույթների կամ պատմական իրակությունների բուն իմաստը հասկանալու համար ստիպված ենք լինում կատարել ստուգաբանական և համատեքստային որոշ ուսումնասիրություններ: Բանն այն է, որ որոշ պատմական իրակություններ եկել են հնագույն ժամանակաշրջանից և, դարեդար փոխանցվելով, նոր իմաստային երանգավորում են ձեռք բերել: Հետևաբար հարկ է կատարել որոշակի անդրադարձ այդ իրակությունների

պատմական շերտավորումը բացահայտելու համար /Ադոնց, 1987/: Թարգմանության մեջ պատմական իրակությունների գրադարձությամբ և տվյալ իրակության ծանոթագրության մեջ մանրագնին ստուգաբանությամբ կարծես թե հնարավոր է համակողմանի արտացոլել տվյալ դարաշրջանի նախարարական վարչակարգի դիրքը, տեղն ու դերը: Նախ նշենք, որ *նախարար* գրադարձված միավորի ստուգաբանությունը, ըստ Ն. Ադոնցի, դեռևս վերլուծության անհրաժեշտություն ունի, հավանաբար այն նշանակել է նահանգների կառավարիչ՝ *rectores*: Ըստ «Նոր Բաղդիրք Հայկազեան Լեզուի» բառարանի /1981, հատոր 2, էջ 399/ այս միավորը ունի հետևյալ իմաստը՝ *նախկին և գլխավոր արարեալ, այսինքն յիշխանութեան եղեալն կամ կարգեալն, սատրապ, մեծ իշխան գաւառի և նահանգի*: Ինչ վերաբերում է *իշխան* գրադարձված միավորին, ապա այստեղ դժվար է միանշանակ տալ վերջինիս նշանակությունը: Բանն այն է, որ *իշխան - իշխանություն* պատմական իրակությունները իրարից տարբերվում էին իրենց քաղաքական կշռով և թագից ունեցած կախումով: Ծայրամասերում գտնվող իշխանությունները, և ամենից առաջ՝ այսպես կոչված բղեշխությունները համեմատաբար ինքնուրույն էին: Կային նաև ներքին իշխանություններ (Մամիկոնյաններ, Բագրատունիներ, Արծրունիներ, Խոռխոռունիներ), մնացած մեծամասնությունը բաղկացած էր մանր իշխաններից, որոնք իրենց ծագումով և կալվածքների չափով շատ ավելի ցածր էին կանգնած և մեծ մասամբ ապաստան էին գտնում հզոր իշխանությունների ազդեցության ներքո /Ադոնց, 1987/:

Եթե Ագաթանգեղոսի «Հայոց Պատմութիւն» երկում գրադարձված միավորներ գրեթե չկան, ապա Մովսես Խորենացու երկում հաճախ ենք հանդիպում պատմաբանների գրադարձության սկզբունքին:

Այսպես, գրադարձության օրինակ է, *բղեաշխ* միավորը, որը պահանջում է մանրակրկիտ ստուգաբանություն և իմաստային վերլուծություն: Այսպես՝

Իսկ ընդդէմ լերինն Կաւկասայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ ու զհզոր ազգն, և նահապետութեանն անուն կարդայ բղեաշխ Գուգարացոց (էջ 128):

Opposite the Caucasus Mountain as governor of the north he appointed this great and powerful family and called the title of their principality the bdeashkh of the Gugarats'ik' (R. Thomson, 2006, p.138).

Наместничество северного края, расположенного против горы Кавказа, он поручает великому и могучему роду и присваивает его родовладычеству титул бдеашха Гугарского (ст. 64)

«Նոր Բաղդիրք Հայկազեան Լեզուի» բառարանում /1979, հատոր 1, էջ 478/ *բղեաշխ* միավորը ստուգաբանվում է որպես՝ *հիւսիսորոս, դուքս, սահմանակալ, կողմնակալ, կուսակալ, զօրավար*: Ինչ խոսք, գրադարձությունը ևս թարգմանական միջոց է, բայց *բղեաշխ* պատմական իրակու-

թյան իմաստաբովանդային նշանակությունը համակողմանի կարտացոլվելը, եթե անգլերեն տարբերակում այն ստանար հակիրճ մեկաբանություն և ծանոթագրություն: Այս առումով, *բդեաշխ* պատմաբանի գրադարձությունը համատեքստային վելուծություն է պահանջում: Այսպես, Հր. Աճառյանի մոտեցմամբ *բդեաշխ*-ը իրանական բառ է և ունի տարբեր ձևեր: Հայերենին ամենամոտ ձևն է պահլավերեն *bitax*, որը նշանակում է *տեղակալ, փոխարքա*: Բդեշխները հին Հայաստանում չորս մեծ բդեշխությունների սահմանագլուխներն էին (Աղձնյաց, Գուգարաց, Ծովք, Անգեղտուն) /Сарксян, 1990, Աճառյան, 1971, Մալխասյան Ստ, 1981/: Երկրի պաշտպանության առումով *բդեշխները* ռազմավարական կարևոր դեր էին կատարում, այն է՝ *սահմանների պաշտպանությունը*: Անգլերեն լեզվի պատմաբանների գննական ուսումնասիրությունը բացահայտում է միջլեզվական համարժեք տարբերակներ ևս, որոնց իմաստները մոտենում են *բդեաշխ* միավորի իմաստին, ինչպես՝ 1. *viceroi* (լատ. *vice – փոխ*, ֆրանս. *roi – արքա* /see: <http://en.wikipedia.org/wiki/Viceroy>; Webster’s Deluxe Unabridged Dictionary, 1979: 2036, Oxford Advanced Learner’s Dictionary, 2001: 1445), 2. *duke - a nobleman of the highest rank* /Oxford Advanced Learner’s Dictionary, 200: 391/: Ռուսերենում *բդեաշխ* միավորը ունի հետևյալ մեկնաբանությունը և կարող է փոխակերպվել այսպես՝ *Бдеих, князь, владетель пограничной области (в Древней Армении—правитель каждого из четырёх пограничных нахараств)* /<http://bararanonline.com/բդեշխ/>:

Մանրագնին իմաստաբովանդային ուսումնասիրություն է պահանջում *հազարապետ* պատմաբանը: «Նոր Բաղդիք Հայկազեան Լեզուի» բառարանում այս միավորները ունի մի շարք նշանակություններ, այսպես՝ *հազարապետ* - 1. *պետ և զլուխ հազարաց զորու*, 2. *իշխան հրամանատար, հոգաբարձու, վերակացու, դուքս, ոստիկան, նախարար*, 3. *տնտեսական վերակացու փան արքայի իշխանի* /1981, հատոր II, էջ 2-3/:

Թեև *հազարապետ* պատմաբանի կազմությունը կարող է որոշ աղբյուրներ ունենալ ռազմական զինվորական պաշտոնյայի հետ, այդուհանդերձ, հիմք ընդունելով Ն. Ադոնցի ուսումնասիրությունները, *հազարապետությունը* սահմանավում է որպես *աշխարհապետ խնամակալություն և փարածվում է դեհկանության, այսինքն՝ հողագործ գյուղացիության վրա* /Ադոնց, 1987/:

Այսպես, Մ. Խորենացու բնագիր տարբերակի ուսումնասիրությունը բացահայտեց *հազարապետ* միավորի կիրառության երկու դեպք: Փորձենք քննության առնել *հազարապետ* միավորի նշանակությունը «Պատմություն Հայոց» երկում. այսպես՝

1. Իսկ Արտաազդ յետ գնալոյն Սմբատայ առնու ի հորէն՝ որում ցանկայրն, զիշխանութիւն զօրացն ամենեցուն: Եւ նախանձ բերելով ընդ նմա եղբարացն ի գրգռութենէ կանաց իւրեանց. վասն որոյ կարգէ

Արտաշես զՎրոյր՝ հազարապետ, զայր իմաստուն և բանաստեղծ, և հաւատայ ի նա զամենայն գործս տանն արքունի (էջ 220):

After Smbat had withdrawn, Artavazd received from his father the object of his ambition-the command of the whole army. But because his brothers were jealous of him at the instigation of their wives, therefore Artashes made Vroyr, a wise and erudite man, hazarapet and entrusted to him all the affairs of the royal household (p. 193).

Поэтому Арташес назначает (из них) Вруйра, мужа мудрого и поэта, тысяченачальником и вверяет ему управление всеми делами царского дома (ст. 105).

2. Յայնժամ արքային Պարսից Վռամայ կոչեցեալ ի դուռն զթագաւորն Հայոց զԱրտաշիր և զմեծն Սահակ, և խնդրէին ի նմանէ ամբաստանել զԱրտաշրէ. և նա հրաժարէր բնաւ ասել ինչ չար կամ բարի: Ապա հրամայէ հազարապետին Արեաց, որ էր Սուրենեան Պահլաւ, զի հաւանեցուցե զնա խրատու սիրելութեան, որպէս զազգային (էջ 432):

Then the Persian king Vram summoned the Armenian king Artashir and Sahak the Great to court. They sought from the latter a denunciation of Artashir, but he absolutely refused to say anything, evil or good. Then he (Vram) ordered the minister of the Aryans, who was of the Surenean Pahlav, to persuade him by frieandly advice as his relative (335).

Тогда персидский царь Врам вызвал армянского царя Арташира и Сахака Великого ко двору, где стали требовать, чтобы последний возвол обвинения на Арташира. Но он отказался высказать что-либо плохое или хорошее. Тогда царь велел тысяченачальнику арийцев из рода Сурена Пахлажа убедить его как сородича дружескими увещеваниями (ст. 206).

Բնագրի՝ *կարգէ Արտաշես զՎրոյր՝ հազարապետ, զայր իմաստուն և բանաստեղծ, և հաւատայ ի նա զամենայն գործս տանն արքունի* հատվածի մանրագնին վերլուծությունը պարզաբանում է *հազարապետ* միավորի քաղաքացիական պաշտոն լինելու փաստը, քանի որ, ըստ համատեքստի, Վրոյրը ստանձնում է թարգմանչական տան վերակացուի պաշտոնը:

Երկրորդ օրինակի համատեքստից դժվար է կռահել *հազարապետ* պատմաբանի ռազմական, թե քաղաքացիական պաշտոնի նշանակությունը: Անգլերեն տարբերակի առաջին համատեքստում հանդիպում ենք *հազարապետի (hazarapet)* գրադարձված տարբերակը՝ *chancellor-կանցլեր* բառի ծանոթագրությամբ, իսկ երկրորդ տարբերակում թարգմանիչը կիրառում է *minister* միավորը: Գուցե *minister* և *hazarapet* միավորների իմաստները որևէ համատեքստում հատվում են միմյանց, բայց ևայնպես դժվարացնում են իրակության լիարժեք ընկալումը տվյալ ժամանակաշրջանում: Ռուսերեն տարբերակներում *հազարապետը* թարգմանվել է ըստ բառապատճենման (calque) թարգմանական մեթոդի՝ *հազար-тыся-*

չյա, պետ-начальник, այն է՝ тысяченачальник: Բառապատճենման մեթոդը ինչ-որ չափով ընթերցողին օգնում է պատկերացում կազմել պատմական իրականությունների ազգամշակութային լիցքի վերաբերյալ, այդուհանդերձ այս մեթոդի կիրառությունը պահանջում է նաև տողատակի մանրազնին ծանոթագրություն:

Այսպես, պատմագրական տեքստի, մասնավորապես՝ հինգերորդ դարի պատմական կոթողները թարգմանելիս առանձնակի դժվարություն են ներկայացնում ազգամշակութային բաղադրիչների՝ պատմական իրականությունների կամ պատմաբառերի թարգմանությունը: Հետևաբար, թարգմանիչը մշտապես բախվում է այն հարցին, թե ինչ համապատասխան մեթոդներ պետք է կիրառել բնագրին բնորոշ մշակութային երևույթները համարժեք վերարտադրելու համար: Այսօրինակ լեզվամշակութային դժվարությունները հաճախ հաղթահարվում են ներըմբռմամբ, «անթարգմանելի» կաղապարների և թարգմանագիտական սկզբունքների մանրազնին ուսումնասիրությամբ ու կիրառությամբ, որն էլ հնարավորություն է տալիս ոչ միայն համապատասխանաբար փոխակերպելու թիրախ տեքստի բաղադրիչները, այլև նախադրյալներ է ստեղծում գրողի և թարգմանությունն ընթերցողի «բնական» փոխըմբռնման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց /քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, ԵՊՀ, Երևան, 1983:
2. Ադոնց Ն. Հայաստանը Հուստինանոսի դարաշրջանում, Երևան, «Հայաստան» հրատ., 1987:
3. Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց / քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Երևան, ԵՊՀ, 1981:
4. Մովսես Խորենացու Հայոց Պատմություն /թարգմ. ծանոթ. Ստ. Մալխասյանցի, Երևան, «Հայաստան» հրատ., 1981:
5. Սարգսյան Գ. Մովսես Խորենացու Հայոց պատմությունը, Երևան, ԵՊՀ, 1991:
6. Cronin M. Translation and Identity. London, New York: Routledge, Taylor & Francis, 2006.
7. Moses Khorenats'i "History of the Armenians" translation and commentary on the Literary Sources by R. W. Thomson: Caravan Books, Harvard University Press, 1978, edited in 2006.
8. Agathangelos "History of the Armenians" translation and commentary by R. W. Thomson, Albany: State University of New York Press, 1976.
9. Агапангелос, История Армении перевод с древнеармянского. Вступительная статья и комментарии К. С. Тер-Давтяна, С. С. Аревшатяна. Ереван, изд. «Наири», 2004.

10. Хоренаци М. История Армении, перевод с древнеармянского. Вступительная статья и комментарии Г. Саркисяна, Ереван, изд. Ереванского университета, 1990.
11. Латышев Л., Семенов А. Перевод, теория, практика и методика преподавания. Москва: Академия, 2005.

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. Աճառյան Հր. Հայերեն արմատական բառարան, հատոր 4, Երևան, ԵՊՀ, 1971:
2. Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, հատոր 1, 2, Երևան, ԵՊՀ, 1979/1981:
3. Ջրբաշյան Էդ., Մախչանյան Հ. Գրականագիտական բառարան, Երևան, «Լոյս» հրատ., 1980:
4. Oxford Advanced Learner's Dictionary. Oxford: Oxford University Press, 2006.
5. Webster's Deluxe Unabridged Dictionary. USA: Mass. Merriam Co. Publishers, 1979.
6. URL: <http://en.wikipedia.org/wiki/Viceroy> (April 2018)
7. URL: <http://bararanonline.com/բղեշխ>

Լ. ԳԱՏՓԱՐՅԱՆ – *Проблема эквивалентного перевода исторических реалий в историографии 5-го века.* – Данная статья рассматривает проблему перевода реалий в историографических текстах пятого века, в частности в работах «История Армении» Агатангелоса и Мовсеса Хоренаци. Необходимо отметить, что исторические реалии труднопереводимы и требуют глубокого теоретического и практического анализа. Основой для данного исследования послужили точки подхода западных и восточных теоретиков, а также оригиналы исторических текстов и их переводы на английский и русский язык.

Ключевые слова: историография, перевод, историческая реалья, Мовсес Хоренаци, Агатангелос

L. GASPARYAN – *On the Problem of Equivalent Translation of Historical Realia in the 5th Century Historiography.* – The paper carries out along the lines of the 5th century historiographic texts and the translation of historic realia with special reference to the “History of Armenia” of Agatangelos and Movses Khorentasi. Proceeding from the assumption that historical realia cause difficulties in the process of translation a thorough theoretical and practical analysis is carried out in the paper. The research is based on theories of the western and eastern theorists, as well as the originals of the historiographic texts and their English and Russian translations.

Key words: historiography, translation, historical realia, Movses Khorenatsi, Agatangelos